



## Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային արհմիության 8-րդ Համագումարի հայտարարություն

### Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շրջափակման վերաբերյալ

Ավելի քան երկու ամիս է ինչ Ադրբեջանից ուղարկված մի խումբ անձանց կողմից ՌԴ զորախմբի անգործության հետևանքով արգելափակված է Լաչինի միջանցքը, ինչի պատճառով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 120 000 բնակչությունը գտնվում է շրջափակման մեջ: Մարդիկ զրկված են սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքներից, առողջապահական ծառայություններից, էներգիայի աղբյուրների կանոնավոր մատակարարումից, ազատ տեղաշարժի իրավունքից, իսկ բազմաթիվ ընտանիքներ չեն կարող կարողանում վերադառնալ տուն: Հարավային Կովկասում հասունանում է հերթական հումանիտար ճգնաժամը: Չնայած դիվանագիտական բոլոր փորձերին, օտարերկրյա կառավարությունների ու դեկլարաների կոչերին, ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի, ԵԱՀԿ-ի և այլ միջպետական կառույցների հայտարարություններին և բանաձևերին, միջազգային իրավապաշտպան կառույցների ահազանգներին՝ շրջափակումը շարունակվում է և իրավիճակի փոփոխության նշմարումներ դեռևս չկան:

Ստեղծված ճգնաժամը ոչ միայն նպատակ ունի քաղաքական ճնշում գործադրել Հայաստանի Հանրապետության վրա, այլև տապալում է երկրում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացները, հետին պլան է մղում օրենսդրական, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական բարեփոխումները, վատթարացնում է աշխատողների բարոյա-հոգեբանական վիճակը:

Շրջափակման արդեն գրեթե 70 օրվա ընթացքում, ցավոք, շրջափակումը դատապարտելուն ուղղված որևէ ազդակներ չեն ստացվել Ադրբեջանի քաղհասարակությունից և աշխատող համայնքից, ինչը վկայում է, որ հարևան երկրի հանրությունը, այդ թվում՝ արհմիությունները սատարում են իրենց իշխանությունների կողմից կատարվող մարդկության դեմ հանցագործությունները՝ այդպիսով հանցակից դառնալով էթնիկ զտումների գործողություններին:

Որքան տևական լինի Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, այնքան ավելի անհնար է դառնալու տարածաշրջանում հասնել խաղաղության և կայունության:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության Համագումարը.

- Խստորեն դատապարտում է Ադրբեջանի իշխանությունների գործողությունները և ՌԴ զորախմբի անգործությունը, որի հետևանքով մեկուսացվել է Լեռնային Ղարաբաղի բնակչությունը և տարածաշրջանում ստեղծվել է հումանիտար ճգնաժամ
- Կոչ է անում միջազգային արհմիութենական կազմակերպություններին ճնշում գործադրել իրենց անդամակցող Ադրբեջանի արհմիությունների վրա, որպեսզի վերջիններս նույնպես դատապարտեն իրենց իշխանությունների կողմից ստեղծած հումանիտար ճգնաժամը
- Կոչ է անում մեր միջազգային արհմիութենական գործընկերներին զորակցություն ցուցաբերել 120 000 հայկական բնակչությանը և դատապարտել Հայաստանին կապող միակ ճանապարհի՝ Լաչինի միջանցքի շրջափակումը: